BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street,
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
www.bakertillyarmenia.com
Email:
info@bakertillyarmenia.com

25.04.2013թ.
N 011306
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գեւորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
Լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների եւ
Էկոնոմիկայի նախարարության կողմից

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-Ի
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ

Մենք իրականացրել ենք «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՄՍ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

BAKER TILLY
ARMENIA

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշգրիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Աուդիտոր

Մ.Մկրտչյան_____

23.04.2013թ.